ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/26

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Կադաստրի կոմիտե
Բողոք բերող՝ «Ֆիչըր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ֆիչըր» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Բլեդ և Ֆլեքս (Blade և Flex) սերվերների ընթացիկ տեխնիկական և ծրագրային սպասարկման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ֆիչըր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 02.04.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է անվավեր ճանաչել Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստից սկսած բոլոր որոշումները, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումը և գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ֆիչըր» ՍՊԸ-ին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.04.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 02.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/4936-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 02.04.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

02.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/26 համարի ծածկագիրը:

09.04.2021թ.-ին և 23.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.04.2021թ.-ին:

2. «Ֆիչըր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆիչըր» ՍՊԸ-ն 02.04.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ս/թ մարտի 30-ին Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել 2 կազմակերպություններ. «Ֆիչըր» ՍՊԸ-ն և «Նամլոք» ՍՊԸ-ն: Ըստ փաստացի ներկայացված հայտերի՝ «Նամլոք» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, մասնավորապես.

1) Հայտի ապահովում փաստաթղթում /հավելված 3/ բենիֆիցարի հաշվեհամարը լրացված չէ, որի հետևանքով, ըստ ՀՀ պետական գնումների մասին օրենսդրության, մասնակցի հայտը ենթակա է մերժման կամ առնվազն շտկման՝ հաշվի առնելով օրենսդրական մեղմացումները:

2) Հաշվի առնելով, որ մասնակցի Հայտի ապահովման փաստաթղթում, որը ներկայացված է բանկային երաշխիքի (հավելված 3) ձևով բացակայում է բանկի կողմից

որևէ հաստատում, ավելին՝ բանկի հաստատման համար նախատեսված դաշտում մասնակիցը լրացրել է անձնական տվյալներ, սույն թաստաթուղթը չի կարելի ընդունել որպես օրինական փաստաթուղթ կամ բանկային երաշխիք: Այսպիսով հանձնաժողովը պարտավոր էր հայտի ապահովում չներկայացնելու հիմքով մերժեր մասնակցի հայտը:

Բացի վերոնշյալ փաստերը, մենք փաստում ենք, որ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ որոշվել է գնահատման նիստը հրավիրել մարտի 31-ին ժամը 15-ին, սակայն հրավիրվել է մարտի 31-ին ժամը 10-ին: Նշված չհիմնավորված շտապողականությունը և վերոնշյալ խախտումները կասկածի տեղիք են տալիս, մասնավորապես՝ հանձնաժողովի կողմից սխորագրված շահերի բախման բացակայության հայտարարության հավաստի լինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ չկա օրենքով նախատեսված կարգով ընթացակարգը չկայացած հայտարարելու որևէ հիմք, առաջարկում ենք ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ֆիչըր» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գին ներկայացրած մասնակից:

Խախտվել են ՀՀ գնումների մասին օրենքի Հոդված 32-ի, Հոդված 34-ի, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման 31-րդ կետի դ ենթակետի, 40-րդ կետի բ ենթակետի, 41-րդ կետի, 43-րդ կետի պահանջները:»:

Ընկերությունը 06.04.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ներկայացնում ենք ՀՀ Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղարի N ԱԹ/2127-2021 գրության վերաբերյալ <<Ֆիչըր>> ՍՊԸ-ի դիտարկումները.

Ա. Գրության մեջ ներառված պնդումը, մեջբերում. <<Նամլոք ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանել ճիշտ ձևաչափին, փաստաթուղթը ներկայացված է եղել բացթողումներով: Մինչ շտկման ծանուցում ուղարկելը մասնակիցը Կադաստրի կոմիտե է ներկայացրել շտկած ճիշտ փաստաթուղթը՝ բնօրինակ տարբերակով (գրությանը կից կներկայացվի փաստաթղթի պատճենը)՝ համաձայն ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի «ե» ենթակետի>>, չի կարող համապատասխանել իրականությանը, քանի որ

1. <<Նամլոք>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը ոչ թե չի համապատասխանել ճիշտ ձևաչափին, այլ փաստացի մասնակցի հայտի ապահովման փաստաթղթում, որը ներկայացված է բանկային երաշխիքի (հավելված 3) ձևով բացակայում է բանկի կողմից որևէ հաստատում, ավելին՝ բանկի հաստատման համար նախատեսված

դաշտում մասնակիցը լրացրել է անձնական տվյալներ և սույն փաստաթուղթը չի կարելի ընդունել որպես օրինական փաստաթուղթ կամ բանկային երաշխիք:

ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չկա որևէ հիշատակում հրավերով նախատեսված փաստաթղթերի անհամապատասխանության ավելին, ավելին՝ կա հրավերով նախատեսված փաստաթղթերի համապատասխանության արձանագրում: Նույն արձանագրության մեջ չկա որևէ գրառում օրենքով սահմանված կարգով նշված փաստաթղթի շտկում պահանջելու վերաբերյալ /մասնակցի կողմից հայտով ներկայացված երաշխիքը կցվում է/:

Հակված ենք կարծելու, որ շտկում չի պահանջվել մասնակցից, քանի որ դրա փաստացի ապացույցները չեն ներկայացվել կադաստրի կոմիտեի կողմից բողոք քննող անձին ուղղված գրության մեջ:

2. Ուշագրավ է, որ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստը տեղի է ունեցել 31.03.2021թ. ժամը 10-ին, արձանագրությունը և ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը տեղեկագրում հրապարակվել են նույն օրը 31.03.2021թ. ժամը 11.30-ին, սակայն <<Նամլոք>> ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով վճարման անդորագրում ֆիքսված է 01.04.2021թ. ժամը 12.54:

3. ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի «ե» ենթակետի>> պահանջների կատարումը, ինչպես նշվում է գրությունում, չի առնչվում ներկա գործին առհասարակ, փոխարենը առնչվում է դ ենթակետը, որի պահանջները կարծում ենք խախտվել են ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի կողմից՝ միաժամանակ շրջանցելով կարգի 43-րդ կետի պահանջները:

4. Նաև նշենք, որ մասնակցի կողմից հայտով իբրև երաշխիք ներկայացված փաստաթղթում նշված է ՎՏԲ բանկը, սակայն հետագայում ներկայացվել է Ամերիաբանում վճարման անդորագիր, ինչը ևս հավատում է <<Նամլոք>> ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու պահին երաշխիք չունենալու փաստը:

Բ. Գրության մեջ ներառված պնդումը, մեջբերում. <<Ընթացակարգը չկայացած համարվել է ոչ թե հրավերի պահանջներին «Նամլոք» ՍՊԸ-ի հայտի անհամապատասխանության պատճառով, այլ ՀՀ Ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 գրության և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման հիման վրա>>, կարծում ենք անտեղի է և առնչություն չունի այս բողոքի հետ, քանի որ <<Ֆիչըր>> ՍՊԸ-ի կողմից հակառակ պնդում բողոքում ներառված չի եղել, ավելին՝ բողոքը ներկայացնելիս դեռևս մեր

կազմակերպությանը հայտնի չի եղել ընթացակարգի չեղարկման մասին, ինչը կարող է փաստել բողոքարկման վճարի անդորագրի ժամը՝ 10.22:»:

3. <u>Կադաստրի կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.04.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4983-2021 գրությամբ դիմել է Կադաստրի կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ֆիչըր» ՍՊԸ-ի կողմից 02.04.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 06.04.2021թ.-ին թիվ ԱԹ/2127-2021 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ, տրամադրելով բողոքի քննության համար անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Կադաստրի կոմիտեի ղեկավարին ուղղված Ձեր 2021 թվականի ապրիլի 2-ի N /ԲՔԱ-ԼՕ/2/4983-2021 գրության՝ հայտնում ենք, որ «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգը հայտարարվել է 2021 թվականի մարտի 23-ին, մրցույթի բացումը եղել է 2021 թվականի մարտի 30-ին: Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ «ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ն և «Նամլոք» ՍՊԸ-ն: Համաձայն մրցույթի նախահաշվային գնի՝ մասնակիցները պարտավոր էին ներկայացնել հայտի ապահովում: Հայտերի բացումից հետո «Նամլոք» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գին ներկայացրած մասնակից, ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Նամլոք ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանել ճիշտ ձևաչափին, փաստաթուղթը ներկայացված է եղել բացթողումներով: Մինչ շտկման ծանուցում ուղարկելը մասնակիցը Կադաստրի կոմիտե է ներկայացրել շտկած ճիշտ փաստաթուղթը՝ բնօրինակ տարբերակով (գրությանը կից կներկայացվի փաստաթղթի պատճենը)՝ համաձայն ՀՀ Կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի «ե» ենթակետի:

Փաստաթուղթն ընդունվել է գնահատող հանձնաժողովի կողմից և շարունակվել է ընթացակարգի գնահատումը: Վերոգրյալով պայմանավորված՝ «ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի 1-ին և 2-րդ կետերը չեն հանդիսանում ընթացակարգում մասնակցի հայտի մերժման պատճառ, ուստի «ՖԻՉԸՐ» ՍՊԸ-ն չէր կարող լինել հաղթող մասնակից:

Ընթացակարգը չկայացած համարվել է ոչ թե հրավերի պահանջներին «Նամլոք» ՍՊԸ-ի հայտի անհամապատասխանության պատճառով, այլ ՀՀ Ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 գրության և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման հիման վրա:

Ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը ծանուցվել է մասնակիցներին, որտեղ հստակ նշվում է մրցույթի լուծարման պատճառը:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 գրության՝ գնման ընթացակարգը կվերահայտարարվի էլեկտրոնային աճուրդի ձևով:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Կադաստրի կոմիտեի կողմից Բլեդ և Ֆլեքս (Blade և Flex) սերվերների ընթացիկ տեխնիկական և ծրագրային սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 23.03.2021թ.-ին հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 30.03.2021թ.-ին:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նամլոք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից) և «Ֆիչըր» ՍՊԸ-ն:

iv. «Նամլոք» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով սահմանված բանկային երաշխիքում չի նշել բենեֆիցիարի հաշվեհամարը, ինչպես նաև երաշխիքը հաստատվել (ստորագրվել) է վերջինիս կողմից:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 30.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են նույն հրավերով սահմանված պայմաններին:

vi. Հանձնաժողովի 31.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել «Նամլոք» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

vii. www.gnumner.am համացանցային կայքում 31.03.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

viii. Հանձնաժողովի 01.04.2021թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի թիվ 2215-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված է, որ էլեկտրոնային աճուրդների համակարգի վերագործարկման դեպքում, այն գնումները, որոնք գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա են կատարման էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով և համակարգը գործարկելու դրությամբ հաստատված չեն դրանց կազմակերպման համար անհրաժեշտ հայտարարության և հրավերի տեքստերը, իրականացվում են սույն ենթակետում նշված համակարգի միջոցով: ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 շրջաբերականի համաձայն՝ 11.03.2021թ.-ից գնումները անհրաժեշտ է կատարել էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ հաշվի առնելով հիշյալ նորմով սահմանված պահանջները: Համաձայն սույն արձանագրության 1.1 և 1.2 կետերի «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով հայտարարված գնանշման հարցումը լուծարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

ix. www.gnumner.am համացանցային կայքում 01.04.2021թ.-ին հրապարակվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 շրջաբերականը և ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի թիվ 2215-Ն որոշումը:

x. «Նամլոք» ՍՊԸ-ն, որպես հայտի ապահովում, 01.04.2021թ.-ին ներկայացրել է նույն օրը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 000455 կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարագիրը (այսուհետ նաև՝ Հանձնարարագիր) 750 000 ՀՀ դրամի չափով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ֆիչըր» ՍՊԸ-ի կողմից 02.04.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կադաստրի կոմիտեի կողմից Բլեդ և Ֆլեքս (Blade և Flex) սերվերների ընթացիկ տեխնիկական և ծրագրային սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 23.03.2021թ.-ին հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ

կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Հրավերի 7.1-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին:

ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի թիվ 2215-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 2021 թվականի ընթացքում պետության կարիքների համար իրականացվող գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելիս գնման ձևերը նախապես չեն համաձայնեցվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ: Ընդ որում էլեկտրոնային աճուրդների համակարգի վերագործարկման դեպքում, այն գնումները, որոնք գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ենթակա են կատարման էլեկտրոնային

աճուրդների համակարգի միջոցով, և համակարգը գործարկելու դրությամբ հաստատված չեն դրանց կազմակերպման համար անհրաժեշտ հայտարարության և հրավերի տեքստերը, իրականացվում են սույն ենթակետում նշված համակարգի միջոցով՝ գնումների պլանում կատարելով դրանից բխող փոփոխություններ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից ըստ պատվիրատուների, համակարգի վերագործարկման համար սահմանված ժամանակացույցը:

ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 շրջաբերականի համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդների համակարգը վերագործարկվել է, խնդրել են 11.03.2021թ.-ից սկսած գնումները կատարել վերոնշյալ համակարգի միջոցով, հաշվի առնելով նույն նորմով սահմանված պահանջները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կադաստրի կոմիտեի կողմից Բլեդ և Ֆլեքս (Blade և Flex) սերվերների ընթացիկ տեխնիկական և ծրագրային սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 23.03.2021թ.-ին հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Նամլոք» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով սահմանված բանկային երաշխիքում չի նշել բենեֆիցիարի հաշվեհամարը, ինչպես նաև երաշխիքը հաստատվել (ստորագրվել) է վերջինիս կողմից: Սակայն Հանձնաժողովի 30.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանել է նույն հրավերով սահմանված պայմաններին, իսկ Հանձնաժողովի 31.03.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ «Նամլոք» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ինչով պայմանավորված www.gnumner.am համացանցային կայքում 31.03.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Հանձնաժողովի 01.04.2021թ.-ի նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի թիվ 2215-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված է, որ էլեկտրոնային աճուրդների համակարգի վերագործարկման դեպքում, այն գնումները, որոնք գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա են կատարման էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով և համակարգը գործարկելու դրությամբ հաստատված չեն դրանց կազմակերպման համար անհրաժեշտ հայտարարության և հրավերի տեքստերը, իրականացվում են սույն ենթակետում նշված համակարգի միջոցով: ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ

01.1/26-1/3477-2021 շրջաբերականի համաձայն՝ 11.03.2021թ.-ից գնումները անհրաժեշտ է կատարել էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ հաշվի առնելով հիշյալ նորմով սահմանված պահանջները: Համաձայն սույն արձանագրության 1.1 և 1.2 կետերի «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով հայտարարված գնանշման հարցումը լուծարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, ինչով պայմանավորված www.gnumner.am համացանցային կայքում 01.04.2021թ.-ին հրապարակվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 շրջաբերականը և ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի թիվ 2215-Ն որոշումը:

«Նամլոք» ՍՊԸ-ն, որպես հայտի ապահովում, 01.04.2021թ.-ին ներկայացրել է նույն օրը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 000455 կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարագիրը 750 000 ՀՀ դրամի չափով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, Հանձնաժողովը, «Նամլոք» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը պատշաճ ներկայացված չլինելու պարագայում պետք է կիրառեր Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել մասնակցին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը՝ հայտի ապահովումը: Սակայն Պատվիրատուն չկիրառելով վերոնշյալ կետերը, 31.03.2021թ.-ի դրությամբ հաղթող է ճանաչել «Նամլոք» ՍՊԸ-ին, այն պարագայում, երբ Մասնակցի կողմից միայն 01.04.2021թ.-ին է ներկայացվել թիվ 000455 կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարագիրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը «Նամլոք» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով և վերջինս ընտրված մասնակից ճանաչելով, գործել է ոչ իրավաչափ, ինչի արդյունքում խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձն, անդրադառնալով Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման

նիստից սկսած բոլոր որոշումները, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումը անվավեր և գնման ընթացակարգի արդյունքում «Ֆիչըր» ՍՊԸ-ի ընտրված մասնակից ճանաչելու պահանջին, փաստում է հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... *վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը*:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու / փոփոխելու / նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովի կողմից Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված դրույթների թույլ տված խախտման հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված՝ պահանջների բավարարմանը, քանի որ, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի մարտի 12-ի թիվ 01.1/26-1/3477-2021 շրջաբերականը և ՀՀ կառավարության 30.12.2020թ.-ի թիվ 2215-Ն որոշումը, «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել է չկայացած, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի կողմից կայացված՝ Ընթացակարգը

չկայացած հայտարարելու մասին որոշումը իրավաչափ է, չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքով ներկայացված և առկա փաստական հանգամանքները հաստատված ու ապացուցված համարելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված պահանջի բավարարմանը, որպիսի պայմաններում բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիչըր» ՍՊԸ-ի կողմից 02.04.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/26 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**